ՍԲ. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԵՑ ՊԱՏԱՐԱԳ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ 10-ԱՄՅԱԿԻՆ

Փետրվարի 22-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում մատուցվեց Գոհաբանական Ս. Պատարագ՝ նվիրված Արցախի ազգային-ազատագրական պայքարի 10-ամյակին: Հանուն այս նշանակալից իրադարձության Հայրապետական հատուկ տնօրինությամբ, հակառակ Բուն Բարեկենդանի օրվա ծիսակարգի, Պատարագը մատուցվեց բաց խորանի առջև: Պատարագիչն էր Հարավային Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Եղնիկ եպս. Պետրոսյանը: Հընթացս Սբ. Պատարագի քարոզեց Ամենայն Հայոց Գարեգին Ա. Կաթողիկոսը՝ Մեծ Պահքի նախօրեին իր պատգամը հաղորդելով հավատացյալ ժողովրդին:

«Այսօր, երբ տոնում ենք Արցախի ազգային-ազատագրական պայքարի 10-ամյակը, ցանկանում եմ, որ դառնանք ինքնավստահ, դուրս գանք կասկածի, տատանումի փորձությունից, որովհետև հավատքով կատարված գործը կհաջողի», – ասաց Վեհափառ Հայրապետը՝ շեշտելով, որ տոնակատարությունը ոչ թե հայացք է դեպի ետ, այլ առաջընթացի մղիչ ուժը: Դիմելով ապրողներին, Վեհափառ Հայրապետը նշեց, որ Արցախյան հերոսների նահատակությունը պետք է արժեցնել կյանքով՝ սեփական ուժերով ամրացնելով անկախության հիմքերը:

Նախագահական ընտրությունների սեմին Վեհափառ Հայրապետը կոչ արեց գրսևորել բարձր գիտակցություն, վեր կանգնել խմբակցային շահերից և հանդես գալ իբրև մեկ միասնական ազգ՝ որպես Մայր Հայրենիք, Մայր Հայաստան՝ Արցախով և համայն Սփյուռքով միասին:

Հավարտ Ս. Պատարգի Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ ազգային-ազատագրական պայքարի բոլոր նահատակների հոգիների խաղաղության համար:

Պատարագին ներկա էին Հայաստանի Հանրապետության վարչապետ Ռոբերտ Քոչարյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Լեռնային Ղարաբաղի վարչապետ Լեոնարդ Պետրոսյանը, ՀՀ Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը և պետական բարձրաստիճան այլ պաշտոնյաներ, սրբազան և հոգեշնորհ հայրեր, հյուրեր, հավատացյալներ: Պատարագին ներկա էր նաև Վեհափառ Հայրապետի հյուր, դավանակից Ղպտի Օրթոդոքս եկեղեցու Միտրոպոլիտ Բիշոյը:

Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ նույն օրը Արցախյան շարժման 10-րդ տարեդարձին նվիրված Սբ. Պատարագ մատուցվեց նաև Հայաստանյայց մյուս բոլոր եկեղեցիներում:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ